



ՈՐԲԵՐՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀՊՏՀ միջազգային տնտեսական
հարաբերությունների ամբիոնի ասպիրանտ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Դիվանագիտության և գործարարության միջև ընդհանրություններն ավելի շատ են, քան կարելի է պատկերացնել առաջին հայացքից, և, ներկայումս, դիվանագիտությունը զարգանում է հենց այդ ընդհանրություններն ամրագրելու ուղղությամբ: Մինչև XIX դարը դիվանագետները գիլսավորապես գրադաւում էին քաղաքականությամբ: Ըստ պատմաբանների՝ այդ ժամանակաշրջանի դիվանագիտությունը նման էր շախմատային խաղի, որտեղ յուրաքանչյուր խաղացող ձգուում է հաղթել իր հակառակորդին: XIX դարում համաշխարհային «շախմատային տախտակի» վրա ավելի գնահատվում էր ռազմական ուժը, իսկ XX հարյուրամյակում դա համարվեց զաղափարախոսությամբ: Այժմ դիվանագիտությունը կրկին հիշեցնում է շախմատային տախտակ, սակայն մեկ կարևոր ակնհայտ տարրերությամբ: Խաղացողներն, ամենից առաջ, կարևորում են իրենց տնտեսական շահը: Ժամանակակից դիվանագետների արջն ծառացած են այնպիսի խմբիներ, ինչպիսիք են խոշոր ընկերություններին շահավետ պայմանագրեր կնքելու գործում օգնությունը, գործարարներին արտասահմանյան երկրներում իրենց գործերը վարելու, օտարերկրյա ներդրումներ ներգրավելու ուղղությամբ բազմակողմանի խորհրդատվության տրամադրումը:

Հիմնաբառեր. դիվանագիտություն, տնտեսական դիվանագիտություն, առևտուրային կցորդ, քաղաքական և տնտեսական շահ, արտաքին քաղաքականություն, շուկայական հարաբերություններ

JEL: F00, F20, F5

«Դիվանագիտություն» եզրույթն առաջին անգամ օգտագործվել է Անգլիայում 1645 թ.¹: Դիվանագիտության դասական ձև է համարվում իտալական մոդելը, որը ձևավորվել է միջավետական առևտուի հիման վրա՝ 1648 թվականին, գերմանական կայսրության կողմից Վեստֆալյան խաղաղության պայմանագրի ստորագրումից հետո: Ըստ դրա՝ ավարտվեց Երեսնամյա պատերազմը, Եվրոպայում եզրափակվեց հարյուրամյա Եկեղեցական (կոնֆեսիոնալ) հակամարտությունը, սահմանվեցին Եվրոպական միջազգային հարաբերությունների համակարգի իրավական հիմքերը և դրանց բնույթը: Պահանջվեց ևս մեկ ամբողջ դար, որ «դիվանագիտություն» եզրույթն օգտագործվի գիտական և մշակութային-քաղաքական շփումներում²:

1737 թ. ֆրանսիացի դիվանագետ Անտուան Պեկեն իր «Մտորումներ բանակցությունների արվեստի մասին կամ հրաշալի դեսպանը» տրակտատում առաջին անգամ օգտագործեց «դիվանագիտական կորպուս» հասկացությունը և ընդլայնեց դիվանագիտության և դրանով մասնագիտորեն գրադարձների գործառույթների մասին պատկերացումները՝ շեշտը դնելով վերջիններիս բարոյական որակների վրա³: Ժամանակի ընթացքում «դիվանագիտություն» հասկացությունը որոշակի զարգացում ապրեց. Խորամանկությունից, հաշվենկատությունից, խարեւությունից անցում կատարվեց դեպի բանակցություններ վարելու արվեստ, իսկ ավելի ուշ՝ միջազգային քաղաքականության ոլորտում պետությունների դեկավարների պաշտոնական գործունեություն, որը նպատակառուղղված է սեփական պետության և քաղաքացիների շահերի պաշտպանությանը:

Տնտեսական դիվանագիտությունը ևս միանգամից չի ծագել: Պահանջվել են հազարամյակներ, որոնց ընթացքում այն վերածվել է միջազգային հարաբերությունների տեսական և գործնական ինքնուրույն ոլորտի: Այսպես՝ ռուս քաղաքացետ և հետազոտող S. Զոնովան առևտուը և տնտեսական դիվանագիտությունը նույնացնում է՝ համարելով, որ «տնտեսական դիվանագիտություն» հասկացության մեջ սկզբունքորեն ոչինչ նոր չէ, պարզապես նախկինում դա անվանվում էր առևտուային⁴: Ֆրանսիացի գիտնական և դիվանագետ Գի Կարրոն դե լա Կարյերը նույնպես այն կարծիքին է, որ տնտեսական դիվանագիտությունը գոյություն է ունեցել շատ վաղուց, իսկ ներկայումս ուղղակի թարմացվել է⁵: Մեկ այլ ռուս հետազոտող՝ տնտեսագետ Դ. Ռեզնիկը տնտեսական դիվանագիտության այն ընկալումը, որ գոյություն ունի ներկայումս, կապում է XIX դարավերջի հետ, երբ, հետևելով Անգլիային, այն ժամանակաշրջանի Եվրոպական առաջատար պետությունների արտաքին գործերի նախարարություններում սկսեցին ստեղծվել առևտուային բաժններ և առևտուային կցորդներ⁶:

¹ Steu Сатոу Э., Руководство по дипломатической практике. М., 1961, № 12: Попов В., Современная дипломатия: теория и практика. Часть 1: Дипломатия - наука и искусство / ДА МИД РФ. М., 2000, № 13:

² Steu Савойский А. Г., Экономическая дипломатия современной России в отношении США на международной арене: Монография. М. – Пятигорск, 2011, № 11–12:

³ Steu Рequet A., Discours sur l'art de négocier ou Parfait ambassadeur. Paris, 1737: Пеке А., Рассуждение об искусстве переговоров. М., 2004:

⁴ Steu Зонова Т. В., Роль экономического фактора в истории дипломатии // Внешнеэкономические связи, № 6, 2005:

⁵ Steu Carron de la Carrrière G., La diplomatie économique: Le diplomate et le marché. Paris, 1998, № 17:

⁶ Steu Дегтерев Д., Экономическая дипломатия: экономика, политика, право. М., 2010, № 14:

Հարկ է փաստել, որ տնտեսական դիվանագիտությունը, իր պատմական հետզբության մեջ պարտական է և ապրանքների պարզունակ փոխանակությանը, և առևտութի զարգացմանը, միջազգային հարաբերություններին, պետությանը և քաղաքականությանը: Տնտեսական դիվանագիտության՝ որպես միջազգային լյանքի նոր երևույթի օրրանը Եվրոպան է, որն առաջին մշտական դեսպանատները ստեղծեց հտալիայում, որտեղ XV դարի կեսերին ծագեցին մի քանի քաղաք-պետություններ, որոնց միջև ձևավորվեցին տնտեսական սերտ կապեր: Պետությունների միջև առևտրային հարաբերությունները չեն կարող զարգանալ բացառապես հիմնադիր երկրների առաջին դեմքերի կողմից արտասահմանում առևտրային կապեր հաստատելու նպատակով ուղարկված առանձին պաշտոնական անձանց՝ հյուպատոսների այցելությունների հիման վրա: Աստիճանաբար, առևտույն գուգահեր, առաջացավ շուկան ուսումնասիրելու, արտասահմանում սեփական երկրի արդյունաբերողների և առևտրականների շահերը պաշտպանելու անհրաժեշտություն:

XVII դարի առաջին կեսին, ըստ ֆրանսիացի մտածող Էմերիկ Կրյուսեի, միջազգային առևտուրը կատարում էր ամենակարևոր դերը, և մարդկանց բարեկեցության մակարդակի բարձրացման գործում առևտրականն ավելի օգտակար կարող էր լինել, քան զինվորը: Ուստի նա կարևորում էր ճանապարհաշինարարությունը, փողային կշիռների և միասնական դրամական համակարգի սահմանումը⁷: Հենց այդ ժամանակաշրջանում ապրանքադրամական հարաբերությունների զարգացումը Եվրոպայում դարձավ տնտեսագիտության տեսության (քաղաքատնտեսություն) ծնունդն ազդարարող գործոն, որը հաջորդ հարյուրանյակում, շնորհիվ անգլիացի տնտեսագետներ Ադամ Սմիթի և Դավիթ Ովկարդոյի, վերաձեց ինքնուրույն գիտական ուղղության: Այդ կապակցությամբ Գի Կարոռն դե լա Կարյերը այսպիսի կարծիք է հայտնել: «...դրանք տնտեսական դիվանագիտության ծագման և հիմնախնդիրների առաջադրման առաջին հիմնաքարերն էին»⁸:

XVIII դարի կեսերին Եվրոպայում տնտեսական դիվանագիտության՝ որպես միջազգային հարաբերությունների ուրույն երևույթի և պետությունների արտաքին քաղաքականությունների իրականացման ոլորտի ծննդին նպաստեցին մի շարք օբյեկտիվ պատճառներ: Դրանցից մեկը միջազգային էներգետիկ ձգնաժամն էր: Համաշխարհային պատմությունը վկայում է, որ մինչև 1600 թվականը Եվրոպայում որպես էներգետիկ ռեսուրս օգտագործվում էր տորֆը: Այնուհետև դրան փոխարինեցին վառելափայտը և փայտյա գերաները: Սակայն 1750-ականներին արդեն բոլոր անտառները հատվել էին, և ձգնաժամը մղեց որոնելու վառելիքի նոր տեսակներ: Կարևորագույն վառելանյութ դարձավ ածուխը, որը հսկայական քանակությամբ առկա էր ընդերքում: Ամենուրեք գործարկված ածխահանքերը հանգեցրին արդյունաբերական հեղաշրջման⁹:

XVIII դարի առաջին կեսին Եվրոպական միապետությունները ռազմական բախումներից ամրողովին հյուծվել էին, պետական գանձարանները դատարկվել էին, և պատահական չեր, որ ֆրանսիացի մտածողների շրջանում իշխում էր այն համոզմունքը, որ առևտրային կապերը և պետությունների կողմից ստացված օգուտները կարող են դառնալ միջազգային հակա-

⁷ Տե՛ս Տրակտատы о вечном мире / Сост. И. Андреева, А. Гулыга. СПб., 2003, էջ 60:

⁸ Carron de la Carrière G., նշվ. աշխ., էջ 53:

⁹ Տե՛ս A la découverte de l'Europe. Luxemburg, 2008, էջ 25:

մարտությունների դադարեցման արդյունավետ միջոց: 1763 թ. փետրվարի 10-ին Անգլիայի, Ֆրանսիայի և Իսպանիայի միջև Վերսալում կնքված Փարիզ-յան հաշտության պայմանագիրը, ինչպես նաև այդ ժամանակաշրջանում Եվրոպական երկրների միջև կնքված հաշտության այլ պայմանագրեր ամրագրեցին Արևմտյան Եվրոպայում միջազգային հարաբերությունների Վեստֆալյան համակարգը¹⁰: Դա նպաստեց միջազգային ասպարեզում տնտեսական դիվանագիտության զարգացմանը:

Միջազգային դիվանագիտական լեզուն մոտ երկու հարյուրամյակ ֆրանսերենն էր, որը փոխարինեց դասական լատիներենին: Ֆրանսիացի փիլիսոփա Շարլ Մոնտեսքյոն պնդում էր, որ աշխարհը կոմերցիայի բնական հետևանքն է, քանի որ շահագետ գործով համատեղ գրադպող երկու երկրներ չափից ավելի են միջմանցից կախված, որ պատերազմեն: Իսկ ֆրանսիացի ռեֆորմիստները XVIII դարը կոչեցին «առևտորի դար», որը եկավ փոխարինելու պատերազմների դարաշրջանին¹¹:

Եվրոպական երկրների արագընթաց տնտեսական զարգացումը, կայիտալիստական արտադրահարաբերությունների նպատակավաց աճը, զաղութային հակամարտությունները և, որ գլխավորն է, պետությունների քաղաքական և տնտեսական շահերի համաձուլումը կարելի է դիտարկել որպես տնտեսական դիվանագիտության պարզագույն նախատիպ: Այդ ժամանակաշրջանում արտադրության ավանդական մեթոդները թանկության և ոչ շահութաբեր լինելու պատճառով այլևս չեն կարողանում բավարարել ներքին շուկայի պահանջները: 1750-ական թվականներին արդեն ի հայտ էին գալիս «փափուկ» ինդուստրացման հետևանքները: Այսինքն՝ տնտեսական բարեփոխումները տեղի էին ունենում շնորհիվ ոչ հսկայական գործարանների կառուցման, որոնք կարող էին փոփոխել շրջակա միջավայրը և ապակայունացնել հասարակությունը: Դա իսկական արդյունաբերական հեղաշրջում էր: Դրական դերակատարում ունեցավ նաև ժողովրդագրական հեղափոխությունը, որը հանգեցրեց Եվրոպայում բնակչության աճի, ինչպես նաև բանկային համակարգի զարգացումը, շուկայական մրցակցությունը, հումքային ապրանքների մշակումը, զաղութային առևտուրը, ներդրումների հոսքը: Այդ ամենը հատուկ սրություն հաղորդեց պետությունների տնտեսական հիմնախնդիրներին: Հենց այդ ժամանակաշրջանում էլ տեղի ունեցավ հասարակական մտածողության փոփոխություն, որն ուղղվեց դեպի տնտեսական զարգացումը:

Այդ ժամանակաշրջանում խոսք անգամ չկար տնտեսական դիվանագիտության տեսություն ծևավորելու մասին: Ինչպես իրավացիորեն նշում է ֆրանսիացի փիլիսոփա Պիեռ Ժոզեֆ Պրուտոն, աշխարհը կառավարում էր տնտեսագիտության տեսությունը, իսկ երկրների միջև տնտեսական հարաբերությունները հաղթանակ էին տանում քաղաքական բախումների և ազգային հակամարտությունների հանդեպ¹²:

1815 թ. հունիսի 9-ին Վիեննայի կոնգրեսի Եզրափակիչ (Գլխավոր) ակտի ստորագրումից հետո Եվրոպայում ամրագրվեց միջազգային հարաբերու-

¹⁰ Տես Պրոտոպով Ա. Ս., Կոզմենկո Վ. Մ., Ելմանովա հ. Ս., История международных отношений и внешней политики России (1648–2000) / под ред. А. С. Протопопова. М., 2001, էջ 37, 46–47:

¹¹ Տես Զօնովա Տ., նշվ. աշխ.:

¹² Տես Политические противоречия: теория конституционного движения в XIX столетии (во Франции) / Предисл. А. Ю. Федорова. М., "КРАСАНД", 2011, էջ 87:

թյունների համաժողովային դիվանագիտությունը կամ, այսպես կոչված, համաժողովների միջոցով իրականացվող դիվանագիտությունը:

XVIII դարի վերջերին ԱՄՆ-ը, ստանալով անկախություն, ընդհակառակը՝ այն ժամանակ զգնահատեց միջազգային առևտորային հարաբերություններում դիվանագիտության նշանակությունը և համարում էր, որ նավաշինարարները, առևտորականները, նավթային ընկերությունները կարող են ինքնուրույն բանակցել այլ պետությունների հետ, իսկ դրա համար բավարար է արտասահմանում երկրի շահերը ներկայացնող մեկ հյուպատոսի առկայությունը: Եվրոպայում դիվանագետների օգնությամբ ստեղծվեցին բազմաթիվ առևտորային ընկերություններ, որոշակիացվեցին մեկ պետության կողմից մյուսի հանդեպ ազդեցության ոլորտները, պայմանավորվածություններ ձեռք բերվեցին ընդերքի շահագործման բացարիկ իրավունք ստանալու համար: Մի շարք Եվրոպական երկրների (Անգլիա, Ֆրանսիա, Ավստրո-Հունգարիա, Իսպանիա, Իտալիա, Բելգիա) արտաքին գործերի նախարարություններում ստեղծվեցին առևտորային վարչություններ: Առևտուրը և ֆինանսական քաղաքականությունը աստիճանաբար դարձան պրոֆեսիոնալ դիվանագիտության բաղկացուցիչ մասը:

Երկու համաշխարհային պատերազմների ընթացքում դիվանագիտության և տնտեսական համագործակցության դերը հատկապես մեծացավ: Զինամթերքի, ռազմական սարքավորությունների գնումները, պարենի մատակարարությունները և միջազգային հարաբերություններում քաղաքականության ու տնտեսության այլ խնդիրներ մշտապես գտնվում էին պետությունների կառավարությունների և պատերազմող երկրների արտաքին քաղաքական ինստիտուտների ուշադրության կենտրոնում: Այդ ժամանակ միջազգային քաղաքականությունը թերվեց դեպի տնտեսականացում:

1945 թ. հետո երկողմ հիմքի վրա իրականացվող համաժողովային դիվանագիտությունը և տնտեսական դիվանագիտությունը համարվեցին կոլեկտիվ դիվանագիտությամբ, որն արտացոլում էր երկրների առանձին խմբերի դիրքորոշումը, և բազմակողմ դիվանագիտությամբ՝ միջազգային կազմակերպություններում մասնակցության և պետությունների միջև բազմակողմ համաձայնագրեր կնքելու ուղիով:

Աշխարհը գտնվում էր հավասարակշռության վիճակում և փորձում էր գտնել մակրոտնտեսական հիմնախնդիրների լուծումներ: Ազատ ապրանքափոխանակությունը, հիմնական արժույթների փոխարկելիությունը, շուկայական տնտեսական հարաբերությունները, միջազգային գործընթացների համընդհանրացումը համաշխարհային հանրությանը դրդում էին գտնել կապտավիստական և սոցիալիստական համակարգերի հակամարտությունը համագործակցության ընդունելի ձևերով փոխարինելու ուղիներ: Այդպիսին էր XX դարի տնտեսական դիվանագիտությունը, որտեղ, այնուամենայնիվ, քաղաքական գործոնը շարունակում էր մնալ բավական ուժեղ:

XX դարի վերջին քառորդում միջազգային ասպարեզում պետական շահերի ապահովումը երկրների տնտեսական և քաղաքական գործունեության հավասարակշռված, միասնական մոտեցման գերակայությունն է, որը և դարձավ տնտեսական դիվանագիտության՝ որպես արտաքին քաղաքականության գործնական և տեսական իրականացման «հաջորդ ալիքի» հիմնական պատճառը:

Միջազգային կյանքի իրական հարցերի կարգավորումը մինչ այժմ իրականացվում է միջազգային իրավունքի ընդունված նորմերին և սկզբունք-

ներին համարժեք հատուկ գործիքների, մասնավորապես՝ Վիեննայի «Դիվանագիտական հարաբերությունների մասին» 1961 թ. ապրիլի 18-ին ընդունված կոնվենցիայի, ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բանաձևերի, ԱՀԿ կանոնների և այլ միջազգային կազմակերպությունների օգնությամբ:

Որպես դիվանագիտության հատուկ, գերակա տեսակ՝ տնտեսական դիվանագիտությունը գտնվում է պետության արտաքին քաղաքականության, արտաքին տնտեսական կուրսի, արտաքին տնտեսական գործունեության խաչմբառությունը և պետության արտաքին քաղաքականության իրականացնան միջոց է:

Այսպիսով՝ տնտեսական դիվանագիտությունը դիվանագիտության հատուկ, գերակա ոլորտ է: Դրանց միջև առկա է ամենաակտիվ փոխկազմականություն, քանի որ տնտեսական դիվանագիտության համար որպես հիմք է ծառայում ավանդական դիվանագիտությունը՝ իր բոլոր միջոցներով, մեթոդներով և հնարքների գինանոցով:

Տնտեսական դիվանագիտությունը արտաքին քաղաքականության կարևորագույն միջոց է, որը սահմանում է պետության կողմից քաղաքական որոշումներ ընդունելու առավել բարենպաստ և օպտիմալ մեթոդները, որոնք հիմնված են համամարդկային արժեքների, միջազգային իրավունքի, երկու և ավելի երկրների տնտեսական ու ռազմավարական շահերի ընդհանրության վրա: **Տնտեսական դիվանագիտության հիմնական չափանիշը պետության կողմից իր արտաքին տնտեսական կուրսի և ամբողջ արտաքին քաղաքական գործունեության իրականացման նպատակով քաղաքականության և տնտեսության փոխադարձ ներթափանցումն ու համաձուլումն է:** Ընդ որում, հսկայական դերակատարություն ունեն տնտեսական, քաղաքական, գիտատեխնիկական, բնապահպանական, տեխնկատվական գործոնները:

Նշենք, որ տնտեսական դիվանագիտությունը և երկրի արտաքին տնտեսական քաղաքականությունը նույնական հասկացություններ չեն: **Տնտեսական դիվանագիտության միջոցառումների իրականացման նպատակը տնտեսական հարաբերությունների զարգացման հիմնախնդիրների լուծման ուղղությամբ պայմանավորվածությունների և փոխընդունելի լուծումների ձեռքբերումն է, այլ խոսքով՝ արդյունավետ փոխազդեցության զարգացումն է, որում շահագրգռված են բոլոր կողմերը:** Արտաքին տնտեսական քաղաքականության նպատակների իրականացումը և կառավարությունների համապատասխան որոշումների ընդունումը ենթադրում է հավատարմություն երկրների արտաքին տնտեսական կուրսին: Ուստի, արտաքին տնտեսական ոլորտում, այլ երկրների հետ հարաբերություններում հաճախ կիրառում են միակողմանի իրավական միջոցառումներ, որոնք կարող են լայն տարածում չունենալ և թելադրվել ազգային շահերի պաշտպանության նպատակով: Նման միջոցառումներ հաճախ ձեռնարկվում են ի հակակշիռ այլ երկրների շահերի, որը արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների միջև հակամարտությունների և պատասխան միջոցառումների պատճառ է դաշնում, ինչը սահմանափակում է գործընկերության ազատությունը:

Անհերքելի է, որ տնտեսական դիվանագիտության արդյունավետությունը և համապատասխանաբար՝ երկրի և դրա տնտեսական սուբյեկտների արտաքին տնտեսական գործունեությունը կախված են հստակ պետական արտաքին տնտեսական ռազմավարության արկայությունից: Դրանում պետք է հասկանալի ծնակերպեն արտաքին տնտեսական գործունեության ընդհա-

նուր նպատակները, որոշակի խնդիրները և ռազմավարական ուղղությունները, նշվեն արտաքին առևտորի ապրանքային և աշխարհագրական կառուցվածքի գերակայությունները, ներդրումային համագործակցության ուղղությունները և առավել նախընտրելի ձևերը:

Օգուագործված գրականություն

1. Сатоу Э., Руководство по дипломатической практике. М., 1961.
2. Попов В. И., Современная дипломатия: теория и практика. Часть 1: Дипломатия - наука и искусство / ДА МИД РФ. М., 2000.
3. Савойский А. Г., Экономическая дипломатия современной России в отношении США на международной арене: Монография. М. – Пятигорск, 2011.
4. Пеке А., Рассуждение об искусстве переговоров. М., 2004.
5. Зонова Т. В., Роль экономического фактора в истории дипломатии // Внешнеэкономические связи, № 6, 2005.
6. Дегтерев Д. А., Экономическая дипломатия: экономика, политика, право. М., 2010.
7. Трактаты о вечном мире / Сост. И. Андреева, А. Гулыга. СПб., 2003.
8. Протопопов А. С., Козьменко В. М., Елманова Н. С., История международных отношений и внешней политики России (1648–2000). М., 2001.
9. Политические противоречия: Теория конституционного движения в XIX столетии (во Франции) / Предисл. А. Ю. Федорова. М., "КРАСАНД", 2011.
10. Pequet A., Discours sur l'art de négocier ou Parfait ambassadeur. Paris, 1737.
11. Carron de la Carrière G., La diplomatie économique: Le diplomate et le marché. Paris, 1998.
12. A la découverte de l'Europe. Luxemburg, 2008.

РОБЕРТ АЙРАПЕΤЯН

Аспирант кафедры международных
экономических отношений АГЭУ

Теоретико-практические основы исторического развития экономической дипломатии.— Между дипломатией и бизнесом существует больше общностей, чем можно представить на первый взгляд, и в настоящее время дипломатия развивается по пути фиксации этой общности. До XIX-го века дипломаты в основном занимались политикой. По мнению историков, дипломатия того периода была похожа на шахматную игру, в которой каждый игрок пытается победить своего противника. В девятнадцатом веке на мировых "шахматных досках" высоко оценивалась военная сила, а в двадцатом веке она была дополнена идеологией. Теперь дипломатия снова напоминает шахматную доску, но с одной существенной разницей: игроки в первую очередь придают большое значение их экономическим интересам. Современные дипломаты сталкиваются с такими проблемами, как помочь крупным компаниям в заключении выгодных контрактов, предоставление компаниям всесторонней консультации по ведению бизнеса за рубежом и привлечению иностранных инвестиций.

Ключевые слова: дипломатия, экономическая дипломатия, торговое представительство, политические и экономические интересы, внешняя политика, рыночные отношения.

JEL: F00, F20, F5

ROBERT HAYRAPETYAN

*Post-graduate of the Chair of International
Economic Relations at ASUE*

Theoretical Practical Bases of the Historical Development of Economic Diplomacy.— There is more in common between diplomacy and business than can be imagined at first glance, and at present diplomacy is developing along the path of fixing this commonality. Until the 19th century, diplomats were mainly engaged in politics. According to historians, the diplomacy of that period was like a chess game in which each player tried to defeat his opponent. In the 19th century, the world's "chess boards" highly valued the military force, and in the 20th century it was supplemented by ideology. Now diplomacy again resembles a chessboard, but with one significant difference: players first and foremost attach great importance to their economic interests. Modern diplomats face such problems as assisting large companies in concluding profitable contracts, providing companies with comprehensive advice on doing business abroad and attracting foreign investment.

Key words: *diplomacy, economic diplomacy, trade representation, political and economic interests, foreign policy, market relations*

JEL: F00, F20, F5